№ 66 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 24 1901 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 24 № 66

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցիշեցէք նրանց էլ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Անբերրիութիւնից վնասվածների օգտին. Հայոց ներկայացումները. Նամակ Բագուից. Նամակ Էջմիածնից. Նամակ Շուլաւերից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղացու ցաւերից։

ՑԻՇԵՑՔԷ ՆՐԱՆՑ ԷԼ

—

Տօները մօտենում են։ Ամեն մարդ պատրաստվում է այդ տօներին ուրախութիւններ անելու, զուարճանալու և ժամանակաւորապէս մոռանալու իր սովորական մտատանջութիւնները։ Աշխատաւոր մարդը այդ տօներին հանգստանում է, այցելում է իր ծանօթներին և մտերիմներին և յետոյ թարմացած՝ նորից դիմում է աշխատանքի և զբաղվում է իր չարքաշ կեանքի հոգսերով։

Տօներն ամենքի համար են։ Սակայն շատերը կան, որոնք նոյնպէս ցանկանում են մի բարեփոխութիւն, մի աննշան բարւոքում մտցնել իրանց կեանքի մէջ գոնէ այդ տօների ժամանակ, բայց անկարող են, որովհետև ոչ մի միջոց չունեն իրանց ցանկութիւնները կատարելու։ Շատերի համար արդէն մեծ ուրախութիւն կը լինի այն, եթէ նրանք կարող լինեն այդ օրը փոքր ինչ վայելուչ սեղան ունենալ և ըստ իրավունքի չը լինեն ցամաք հացով կերակրվելու։

Թող ձեզնից իւրաքանչիւրը մտածէ իր չքաւոր հարևանի մասին գոնէ այս օրերի համար. թշուառը ամբողջ ամիսներով և տարիներով տեսնում է ձեզանից շատերին մշտական տօների և հանդէսների մէջ և նա մի տեսակ հաշտվել է այդ իրողութեան հետ։ Բայց նա չէ կարող անտարբեր նայել այդ դրութեան վրա այն մեծ և ընդհանուր տօներին, որտեղ ամենքը պէտք է ուրախանան և ամենքը պէտք է մասնակցեն տօնական հանդէսներին։

Իւրաքանչիւր տարի մենք ստացել ենք տօների համար որոշ նուիրատուութիւններ, որոնցով կարողացել ենք օգնել այն խեղճ ընտանիքներին, որոնք շատ խեղճ և անելանելի վիճակի մէջ են, սակայն ամաչում են և սովոր չեն դիմելու մուրացկանութեան։ Ինչպէս են այդ ընտանիքները ապրում սովորական ժամանակ՝ այդ միայն իրանց է յայտնի։ Նրանից շատերը հազիւ հազ կարողանում են ցամաք հացով կերակրվել և զրկում են իրանց բոլոր միւս պահանջներից։

Մենք պատրաստ ենք և այժմ, առաջիկայ զատկական տօների առիթով, ընդունել նուիրատուութիւններ բաժանելու այն չքաւոր ընտանիքներին, որոնց նեղ դրութիւնը մեզ լաւ յայտնի է։ Ցոյս ունենք, որ կը գտնվեն բաւականաչափ անձինք, որոնք կը յիշեն իրանց չքաւորներին և թէ իրանք կօգնեն նրանց անմիջապէս և թէ մեզ միջոց կը տան սփոփելու մեզ դիմող թշուառներին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

XXXXII

Ամեն ինչ փոխվում է այս աշխարհում։

Առաջ Պարսկաստանի հայերն էին մեզնում պարապում խաչագողութեամբ, այժմ մենք ենք սկսել խաչագողներ ուղարկել դէպի Սալմաստ, Ուրմի եւ այլն։

Ներմուծութեան ապրանքից՝ արտահանութեան ապրանք է դարձել այժմ խաչագողութիւնը։

«Մշակի» 54 համարում, «Մինչեւ երբ» վերնագրով յօդուածում, խօսելով Սալմաստում գտնվող օտարականների, իսկապէս ռուսահայերի մասին, պ. Ս. Մ. այսպէս է բնորոշում նրանց.

«Դրանք զանազան բաղդախնդիր անձնաւորութիւններ են, որոնք չը կամենալով իրանց աշխատանքով ապրել եւ լսելով Պարսկաստանում տիրող անիշխանական կարգերի մասին, եկել մտել են Սալմաստ։ Բառի բուն նշանակութեամբ նրանք այնտեղ ոչ մի գործ չունեն, նրանց զբաղմունքն է առաւօտից մինչեւ երեկոյ թափառել մէկ գինետնից միւսը, կամ ամբողջ գիշերը այս անբարոյական կնոջ մօտից գնալ միւսի մօտ, կամ թէ այս գիւղացու տուն մտնել, փող ուզել, միւսից մի ուրիշ պահանջ անել եւ ապա գործել ամեն տեսակ անվայել եւ աղտաբեր գործեր։ Ցաւալին այն է, որ նրանք չահագործում են սուրբ եւ պաշտելի անուններ, նրանք մինչեւ անգամ այս ու այն հեռաւոր տեղերում վստահացնում են, թէ իրանք գործով են զբաղված եւ մեծ գործերով...

Այնուհետեւ յօդուածագիրը հաղորդում է, թէ ինչ չարիքներ են պատճառում այդ պարոնները սալմասցիներին, եւ վերջացնում է այսպէս.

«Գիւղի պատուաւոր գերդաստաններից մէկը արդէն Թաւրիզում տուն է գնել ընտանիքով Սալմաստից հեռանալու նպատակով, նրա օրինակին պէտք է հետեւեն եւ ուրիշ մէկ-երկու ընտանիքներ, իսկ բազմաթիւ ընտանիքներ արդէն պատրաստվում են Ռուսաստան գաղթելու. արդէն այս վերջին երկու տարում աւելի քան 100 ընտանիք Սալմաստից գաղթել են Ռուսաստան միայն իրանց հոգին այդ հրէշների ձեռքից ազատելու համար. չը յիշենք այն տղամարդկանց, որոնց թիւը հարիւրներից անցնում է, որոնք դարձեալ մի եւ նոյն պատճառով չեն կարող իրանց հայրենիք մտնել։ Ի՞նչ պէտք է լինի մեր վիճակը. մինչեւ երբ այսպէս պիտի շարունակվի մեր դրութիւնը. ինչ միջոցով մենք պէտք է ազատվենք այս ազգակործան հրէշներից»։

Ինչպէս տեսնում էք, հարցը հետաքրքրական է, մանաւանդ եթէ նկատի առնենք, որ այդ հրէշներից կան ոչ միայն Պարսկաստանում, որ այդ հրէշները մեծ մասամբ ռուսահայեր են եւ որ նրանք չատ աւելի վտանգաւոր են, քան իսկական խաչագողները։

Իսկական խաչագողները աղուէս-խաչագողներ էին, իսկ սրանք գայլ-խաչագողներ են։ Նրանք գործում էին խաբեբայութեամբ եւ մեղմ միջոցներով, սրանք՝ բռնութեամբ եւ արիւնահեղ միջոցներով։ Խաչագողի տիպը ենթարկվել է էվոլիւցիայի եւ փոխվել է դէպի վատը,—յիսուսիկ ձեւացող խաչագողի տեղը բռնել է ենիչէրի—խաչագողը։

Ենիչէրի—ահա իսկական բառը, որ կարող է բնորոշել այդ հրէշներին, որոնք զանազան վեհ գաղափարներ, վսեմ անուններ ու սուրբ զգացմունքներ չահագործում են, որպէս զի առանց աշխատանքի ապրեն գիւղացու հաշուով եւ անպատիժ ոտնատակ տան նրա ընտանեկան պատիւը։

Ո՞վ է մեղաւոր, որ մեզանում առաջ է եկել այդ զզուելի տիպը։ Ո՞ւմ վրա է ընկնում այդ երեւոյթի պատասխանատուութիւնը։—Իմ խորին համոզմունքով, այն ամենքի վրա, որոնք, դուրս գալով ժողովրդի առաջ իբր որոշ գաղափարների քարոզիչներ ու պաշտպաններ եւ գրաւելով ժողովրդի վստահութիւնը, իրանք խաչագողութեամբ չեն պարապում, բայց ընկերանում են խաչագողական հակումներ ունեցող մարդկանց հետ եւ այնքան կարճամիտ են գտնվում, որ կարծում են, թէ կարելի է կեղտոտ մարդկանց ձեռքով լաւ գործ կատարել եւ զանազան մութ յատկութիւններ ծառայեցնել լուսաւոր գաղափարների համար։

Պէտք է անկեղծ լինել եւ խոստովանել, որ եզուիտութիւնը կաթոլիկ կղերի մենաշնորհը չէ։ Եզուիտներ կան ամեն տեղ եւ աւել կամ պակաս թւով բոլոր կուսակցութիւնների մէջ, մանաւանդ ծայրայեղ,—դէպի աջ կամ դէպի ձախ,—կուսակցութիւնների մէջ։ Եւ ահա, երբ եզուիտութիւնը զօրանում է մի գաղափարի ծառայող խմբի մէջ, երբ այդ խումբը սկսում է խորութիւն չը դնել միջոցների եւ անձնաւորութիւնների մէջ, այն ժամանակ խաչագողութիւնը սկսում է փթթել իբրեւ մի թունաւոր ծաղիկ կեղտոտ ճահճի երեսին։

Անդունդ բացէք եզուիտութեան եւ գաղափարների վառարանները, գիւղացու աչքի լոյս եղներն ու գոմշուկները, մի կտոր չոր հացի տուած... Սակայն կարիքը, անգութ կարիքը մարդուն հնարագէտ է դարձնում։ Փոքրիկ որջի մէջ իրար վրա են թափվել չորս-հինգ գերդաստանի մանր ու խոշորներ, կին ու տղաներ եւ իրանց չնչով աշխատում են եղների ու գոմէշների ձմեռվայ դերը կատարել...

Փչում է քամին, կատաղի քամին. երեւի նա էլ ուզում է գետի գիրկը մտնել... Բայց նա մենակ չէ. իր հետ քաշում, կարծես զօռով տանում է եւ մէկին, տանում է մի կին, որին քաղցը, սպանիչ քաղցը առեւանգել է իր հայրենի յարկից ու տուել քաժու բերանը, որ տաշեղի պէս տանէ նետէ գետը... Ձորն ի վայր գնդի գլոր գնում է նա..

Բայց ո՛չ, նա չէ գնում... տանում են նրան, մէկը սուր ճանկերով խոցած հրում է յետեւից դէպ ձորը, գետի խորքը։—Անօթութիւնը, սովն է դա։ Միւսը ձուլիկ ձուլիկ փեչերից քաշում, քաշկռտում է նրան առաջ, երեւի ինքն էլ չը գիտէ ուր—քամին է դա, կատաղի քամին... Նրա գլխից կիսամաշ «չալովին» շատուցց է թռել ու կարծես իր հետ թոցրել է եւ գեղջկուհու նուիրական ամօթխածութիւնը։ Զուլ փեչերը քամին ծիլ-ծիլ է արել ու իր լպիրշ ճռճռոցով կարծես ծաղրում է նայի մերկութիւնը։ Բայց ումից պիտի ամաչէր նա... քաղցից, քամուց, թէ հոգէառ հրեշտակից... Է՜հ, հոգ չէ, նրանց դիւային քրքիջն էլ երկար տեւել չէ կարող, գետը մօտ է, նա գթոտ է, կարեկից է խեղճ գեղջկուհուն... Շուտով կը ծածկէ ամեն ինչ...

Բայց ինչ որ խառնիճաղանճ աղաղակներ են լսվում, ճիչ, լաց, վայնասուն... Գիւղը հաւաք էր ընկել, թափվեցին ձորն ու թշուառ մահապարտին խլեցին քամու չոր ճանկերից... Բայց ախ, արդեօք պիտի կարողանան փրկել նրան եւ քաղցի ճիրաններից... Ու խեղճ գեղջկուհին, կարծես հէնց այդ մտատանջութիւնից խեղդված, արցունքների միջից ասում էր իր ազատարարներին՝—Ա՜խ, ինչի՞ մարդու հոգէդարձ կենէք...

Գարունն եկաւ, գարունն էլ տարօրինակ... Փետրվարին ում էր տեսել Ախալքալաքում գարուն։ Սարերի ձիւնը հայ հաւար հալվում է, առուները խոխոջում, գետերը կարկաջում, թռչնիկները անհոգ ծլվլում... Բայց արտերը չեն կանաչում... Դաշտը մերկ է ու լերկ... Ո՛չ հերկող կայ, ո՛չ ցանող. լռել է հոտաղի զիլ հօրվելը, չը կայ եղ ու աշառի անուշ բառաչը, որ արեւից խրտնած, ակօսի մէջ փնչում, փրրընչում էր, պոզերով ամպերին սպառնում ու տոտինդ տալով կամ արօրն էլ, մաճն էլ փախցնում իրանց պէս ուրախ ու զուարթ մանկալի ձեռից, կամ «սամին» կոտրում, «սամպաղին» կտրում փախչում, պոզերով, դնչով, սմբակներով գետինը փորում, փորփրում, ու իրանց հաւասեցնում նոյն իսկ ծանր ու մեծ եղներին ու դանդաղ գոմէշներին։ Բայց մանկալը չէ զայրանում, չէ կշտամբում չարաճճի աշառներին, ախր դեռ «խամ են», այլ ուրախ հռհռալով, քրքռալով նրանց յետեւից վազում է տուն, ուր շար ի շար կանգնել են տան հարս ու աղջիկները, մէկը ձեռին մի ձու, որ Սերգեարի կամ Զէյրանի ճակատին զարնէ, որ «աչք» չը տան, միւսները փեչերի տակից հանում են ամաններով ջրերն ու լողացնում, «պուրպատիկ» չինում մանկալին էլ, հօտաղին էլ, որ տարին անձրեւաբեր, առատ լինի...

Իսկ այս տարի, խեղճ հարս-աղջիկներ, ում պիտի լողացնէք, որ երաշտ չը լինի, ում ճակատին պիտի ձու զարնէք, որ չար աչքից ազատ լինի...։ Խեղճեր։ ձեր Զէյրանն էլ, Սէրգեարն էլ, որ սիրասուն բալիկներիդ չափ սիրում էիք, վաղուց կամ մտադրծի սուր սրին զոհ էք տուել, կամ օտարի դռան զարդ չինել ձեր թշուառ գոյութիւնը պահպանելու, մի կտոր չոր հաց ճարելու համար...։ Ո՞ւր է ձեր մանն ու մանկալը, դարուն է ախր, ինչի՞ արօրներդ դուրս չէք դնում... բայց այս տարի արօրն իր մանով «առիքը» պիտի մնայ ու փտի, մանկալն ու հօտաղը Բագուի, Բաթումի փողոցներում իր սեւ օրը լալով պըպզի...։ Թէ տանն էլ լինէին ինչ պիտի ցանէին, չէ՞ որ դեռ անօթի փորերը չեն կարողանում կշտացնել, սերմ որտեղից պիտի ճարէին...։

Բայց բարի մարդիկ անցեալ օրերը անօթիներին ալիւր բաժանեցին քաղաքում 10-ից մէկին մի ամսվայ պաշար, այն էլ մարդուն օրական «մի ֆունտ»...։ Հէյ Աստուած, էս ինչեր ենք տեսնում..., գիւղացի մարդ օրական մի ֆունտ ալիւր... որ մի ականջին ձթէ...։ Քանի «ֆունտ» էիր տալիս, դժբաղդ դիլիսկեցի, երբ աշուղը քո դուռն էր գալիս։ Ի՞նչքան էիր տալիս, վաչեանցի, երբ գաղթական հայը, մուրացիկ խպտին, ասորին քո կալն էր գալիս..., քանի անցեւոր ճամբորդներ, պանդուխտ օտարներ քո դուռն էին կշտանում, քո տանը գիշերում ու առաւօտ դեռ ճամբու պաշարն էլ առած ճանապարհ ընկնում...։ Խեղճ չամդուրեցի, օրճացի, գիւմբիւրդեցի, կորխցի, քանի քանի տարի անտէր անտիրական ընտանիքներ քո «սեալի» լոկ փշրանքներով էիր կերակրում, կշտացնում ու քո սուրբ օջաղի մաքուր հովանու տակ հովանաւորում, պատսպարում...։ Մի անգամ ծունկդ գետին խփելիս քանի-քանիսին էիր սերմացու եւ «բնաղոն» չափում ու ինչքան էլ ամբարդ լցնում նեղ օրվայ համար։ Բայց այսօր... իբրեւ ողորմութիւն «մի ֆունտ» ալիւր ես ստանում ապրելու համար ու մի երկու կօղ էլ կարտօֆէլի կտաւատ պիտի ստանաս, արտերդ ցանելու համար...։ Խեղճ մարդիկ... թշուառներ...։

Բայց ինչ արած, երբ սովը մարդու դուռն է ծեծում, երբ քաղցը սպառնում է քաղցր կեանքիդ վերջ դնել, մի ֆունտ ալիւրն էլ մեծ ողորմութիւն է. երանի թէ գէթ ամենին հասնէր...։

Ջաւախեցի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱՑՈՒ ՑԱՒԵՐԻՑ

(Պատկերներ Ախալքալաքի գաւառի կեանքից)

III

Ձմեռ է, տարօրինակ ձմեռ։ Կարծես այս տարի այդ եղանակին միակ պատշաճաւոր զարդ, Ախալքալաքին յատուկ սպիտակ սաւանն էլ երկինքը զլացել էր տալ այս դժբաղդ գաւառին։ Գուցէ գետնի խորշերում վհուկ պառաւների պէս պըպզած, կուչ եկած մրուկներին նեղութիւն չը պատճառելու համար, կամ թերեւս հէնց նրանց ոչնչացնելու դիտաւորութեամբ երկինքը չէր փռել իր պաղ ու տաք վերմակը... չը գիտեմ... Դա ինձ պէս գիւղացու ինչ խելքի բանն է, թող գիւղատնտեսներն ու գէօլօգները քննեն... Բայց Դիլիսկիայի դաշտն ազատ է ձիւնից։ Թէ տեղ տեղ քար ու քարափի քերծում, ժայռերի ծոցում քամին հաւաքել շեղջ է կապել, այժմ էլ կատաղած գազանի պէս ոռնալով, ուլուլալով շաղ է տալիս ձորն ի վայր, դէպի մանչող գետի խեղդվող ալիքները։

Իրիկնադէմ է. պաղերես արեւը, ապուշի պէս աչքերը չռած, վերջին մնաս բարեւն է տալիս Աբուլի արծակի կատարին ու շտապում դէպի մոր տաք գիրկը։ Բայց քամին դեռ փչում է ու քանի գնում կատաղում. երեւի նա մայր չունի, որ գիրկը մանի ու անտէր որբի պէս, սարսափած գիշերվայ սառնամանիքից, իր վերջին օրհասական հռինչն է արձակում...

Բայց քամին մենակ չէ, որ զուրկ է «մոր» գրկից, տաք անկիւնից. նրան բաղդակից ընկեր է խեղճ գեղջուկը՝ վաչիանցին, օրճացին, դիլիսկեցին, կորխցին, գիւմբիւրդեցին... որոնց պատսպարող «տաք գիրկը», գոմը, քարուքանդ է, ծածքը ծախված է վաղուց, իսկ կենդանի վառարանները, գիւղացու աչքի լոյս եղներն ու գոմշուկները, մի կտոր չոր հացի տուած... Սակայն կարիքը, անգութ կարիքը մարդուն հնարագէտ է դարձնում։ Փոքրիկ որջի մէջ իրար վրա են թափվել չորս-հինգ գերդաստանի մանր ու խոշորներ, կին ու տղաներ եւ իրանց չնչով աշխատում են եղների ու գոմէշների ձմեռվայ դերը կատարել...

Փչում է քամին, կատաղի քամին. երեւի նա էլ ուզում է գետի գիրկը մտնել... Բայց նա մենակ չէ. իր հետ քաշում, կարծես զօռով տանում է եւ մէկին, տանում է մի կին, որին քաղցը, սպանիչ քաղցը առեւանգել է իր հայրենի յարկից ու տուել քաժու բերանը, որ տաշեղի պէս տանէ նետէ գետը... Ձորն ի վայր գնդի գլոր գնում է նա..

Բայց ո՛չ, նա չէ գնում... տանում են նրան, մէկը սուր ճանկերով խոցած հրում է յետեւից դէպ ձորը, գետի խորքը։—Անօթութիւնը, սովն է դա։ Միւսը ձուլիկ ձուլիկ փեչերից քաշում, քաշկռտում է նրան առաջ, երեւի ինքն էլ չը գիտէ ուր—քամին է դա, կատաղի քամին... Նրա գլխից կիսամաշ «չալովին» շատուցց է թռել ու կարծես իր հետ թոցրել է եւ գեղջկուհու նուիրական ամօթխածութիւնը։ Զուլ փեչերը քամին ծիլ-ծիլ է արել ու իր լպիրշ ճռճռոցով կարծես ծաղրում է նայի մերկութիւնը։ Բայց ումից պիտի ամաչէր նա... քաղցից, քամուց, թէ՞ հոգէառ հրեշտակից... Է՜հ, հոգ չէ, նրանց դիւային քրքիջն էլ երկար տեւել չէ կարող, գետը մօտ է, նա գթոտ է, կարեկից է խեղճ գեղջկուհուն... Շուտով կը ծածկէ ամեն ինչ...

Բայց ինչ որ խառնիճաղանճ աղաղակներ են լսվում, ճիչ, լաց, վայնասուն... Գիւղը հաւաք էր ընկել, թափվեցին ձորն ու թշուառ մահապարտին խլեցին քամու չոր ճանկերից... Բայց ախ, արդեօք պիտի կարողանան փրկել նրան եւ քաղցի ճիրաններից... Ու խեղճ գեղջկուհին, կարծես հէնց այդ մտատանջութիւնից խեղդված, արցունքների միջից ասում էր իր ազատարարներին՝—Ա՜խ, ինչի՞ մարդու հոգէդարձ կենէք...

Գարունն եկաւ, գարունն էլ տարօրինակ... Փետրվարին ում էր տեսել Ախալքալաքում գարուն։ Սարերի ձիւնը հայ հաւար հալվում է, առուները խոխոջում, գետերը կարկաջում, թռչնիկները անհոգ ծլվլում... Բայց արտերը չեն կանաչում... Դաշտը մերկ է ու լերկ... Ո՛չ հերկող կայ, ո՛չ ցանող. լռել է հոտաղի զիլ հօրվելը, չը կայ եղ ու աշառի անուշ բառաչը, որ արեւից խրտնած, ակօսի մէջ փնչում, փրրընչում էր, պոզերով ամպերին սպառնում ու տոտինդ տալով կամ արօրն էլ, մաճն էլ փախցնում իրանց պէս ուրախ ու զուարթ մանկալի ձեռից, կամ «սամին» կոտրում, «սամպաղին» կտրում փախչում, պոզերով, դնչով, սմբակներով գետինը փորում, փորփրում, ու իրանց հաւասեցնում նոյն իսկ ծանր ու մեծ եղներին ու դանդաղ գոմէշներին։ Բայց մանկալը չէ զայրանում, չէ կշտամբում չարաճճի աշառներին, ախր դեռ «խամ են», այլ ուրախ հռհռալով, քրքռալով նրանց յետեւից վազում է տուն, ուր շար ի շար կանգնել են տան հարս ու աղջիկները, մէկը ձեռին մի ձու, որ Սերգեարի կամ Զէյրանի ճակատին զարնէ, որ «աչք» չը տան, միւսները փեչերի տակից հանում են ամաններով ջրերն ու լողացնում, «պուրպատիկ» չինում մանկալին էլ, հօտաղին էլ, որ տարին անձրեւաբեր, առատ լինի...

Իսկ այս տարի, խեղճ հարս-աղջիկներ, ում պիտի լողացնէք, որ երաշտ չը լինի, ում ճակատին պիտի ձու զարնէք, որ չար աչքից ազատ լինի...։ Խեղճեր։ ձեր Զէյրանն էլ, Սէրգեարն էլ, որ սիրասուն բալիկներիդ չափ սիրում էիք, վաղուց կամ մտադրծի սուր սրին զոհ էք տուել, կամ օտարի դռան զարդ չինել ձեր թշուառ գոյութիւնը պահպանելու, մի կտոր չոր հաց ճարելու համար...։ Ո՞ւր է ձեր մանն ու մանկալը, դարուն է ախր, ինչի՞ արօրներդ դուրս չէք դնում... բայց այս տարի արօրն իր մանով «առիքը» պիտի մնայ ու փտի, մանկալն ու հօտաղը Բագուի, Բաթումի փողոցներում իր սեւ օրը լալով պըպզի...։ Թէ տանն էլ լինէին ինչ պիտի ցանէին, չէ՞ որ դեռ անօթի փորերը չեն կարողանում կշտացնել, սերմ որտեղից պիտի ճարէին...։

Բայց բարի մարդիկ անցեալ օրերը անօթիներին ալիւր բաժանեցին քաղաքում 10-ից մէկին մի ամսվայ պաշար, այն էլ մարդուն օրական «մի ֆունտ»...։ Հէյ Աստուած, էս ինչեր ենք տեսնում..., գիւղացի մարդ օրական մի ֆունտ ալիւր... որ մի ականջին ձթէ...։ Քանի «ֆունտ» էիր տալիս, դժբաղդ դիլիսկեցի, երբ աշուղը քո դուռն էր գալիս։ Ի՞նչքան էիր տալիս, վաչեանցի, երբ գաղթական հայը, մուրացիկ խպտին, ասորին քո կալն էր գալիս..., քանի անցեւոր ճամբորդներ, պանդուխտ օտարներ քո դուռն էին կշտանում, քո տանը գիշերում ու առաւօտ դեռ ճամբու պաշարն էլ առած ճանապարհ ընկնում...։ Խեղճ չամդուրեցի, օրճացի, գիւմբիւրդեցի, կորխցի, քանի քանի տարի անտէր անտիրական ընտանիքներ քո «սեալի» լոկ փշրանքներով էիր կերակրում, կշտացնում ու քո սուրբ օջաղի մաքուր հովանու տակ հովանաւորում, պատսպարում...։ Մի անգամ ծունկդ գետին խփելիս քանի-քանիսին էիր սերմացու եւ «բնաղոն» չափում ու ինչքան էլ ամբարդ լցնում նեղ օրվայ համար։ Բայց այսօր... իբրեւ ողորմութիւն «մի ֆունտ» ալիւր ես ստանում ապրելու համար ու մի երկու կօղ էլ կարտօֆէլի կտաւատ պիտի ստանաս, արտերդ ցանելու համար...։ Խեղճ մարդիկ... թշուառներ...։

Բայց ինչ արած, երբ սովը մարդու դուռն է ծեծում, երբ քաղցը սպառնում է քաղցր կեանքիդ վերջ դնել, մի ֆունտ ալիւրն էլ մեծ ողորմութիւն է. երանի թէ գէթ ամենին հասնէր...։

Ջաւախեցի

փարի մէջ, համակվեցէք այն սկզբունքով, որ գաղափարներին պէտք է ծառայել միմիայն յանուն բարոյականութեան եւ բարոյական միջոցներով, խարազանով դուրս քշէք գաղափարական տաճարից բոլոր ստոր հակումներ եւ կեղտոտ բնազդներ ունեցողներին, ինչքան էլ նրանք օգտակար թուէին ձեզ ժամանակաւոր շահի տեսակէտից,—եւ խաչագողութիւնը, եթէ կարելի է ասել, գաղափարագողութիւնը՝ կը չքանայ իբր ծանր կոշմար։

Կրկնում եմ, նոր տիպի խաչագողութեան պատասխանատուութիւնը ընկնում է գլխաւորապէս յանուն գաղափարի խօսող եւ իրանց գաղափարականութեամբ պարծեցող անձնաւորութիւնների վրա, եւ նրանք պարտական են ամենից մեծ եռանդով մաքառել այդ երեւոյթի դէմ, որ ոչ միայն մինչեւ գաղթականութիւն հասցնող չարիք է, այլ եւ ամենաանարդ խայտառակութիւն։

Տ. Ց.

ԱՆԲԵՐՐԻՈՒԹԻՒՆԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք Բագուից անբերրիութիւնից վընասվածների օգտին 108 ր. 90 կոպ., որ ժողովված է «Մ. Ա. Քալանթարեանց եւ ընկ.» առեւտրական տան Բիբիէյբաթի նաւթահանքի ծառայողներից եւ մշակներից։ Նուիրատուներն են.—Ա. Ա. Քալանթարեանց 25 ր., Ա. Ցակոբեան 10 ր., Ս. Միրզայեանց եւ Գ. Վարդանեանց 5-ական ր., Թ. Ցովնաթանեանց 3 ր., Ա. Ատովմեանց, Բ. Մելքումեանց, Տ. Վարդանեանց, Ց. Աբուլեանց եւ Ն. Տէր-Մկրտչեանց, 2-ական ր., Նասրուլլա Մօլլա-Մուրադ-օղլի 1 ր. 20 կ., Շ. Մանուկեան, Մ. Թումանեան, Ց. Գիւլմսերեանց, Ն. Տէր-Մկրտչեանց, Օ. Մարտիրոսեանց, Օ. Կովայտիս, Վ. Տարասով, Ս. Սանթուրեան, Ց. Մկրտչեան, Խ. Սաեփանեան, Խ. Ուլեանց, Բ. Ներսէսեանց, Մ. Սափար-Ալի-օղլի. Խաղժիս Խիրիով, Բ. Մկրտչեան, Գ. Ղազարեան, Մ. Ղազարեան, Հ. Սահակեան, Ե. Գիւլմսերեան, Մ. Գրիգորեան—մի-մի բուբլի։ Հանքի մշակներից 29 ր. 70 կ.։ Ընդամենը 108 ր. 90 կոպ., որը գումարելով խմբագրութեան մէջ եղած 1998 ր. 64 կ. հետ, կունենանք 2107 ր. 64 կ.։

ՀԱՑՈՑ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄՆԵՐԸ

—

Հայ դերասանական խումբը հինգշաբթի, մարտի 22-ին, ներկայացրեց «Մադամ Սան-Ժէն» կոմեդիան, հեղինակութիւն Սարդուի եւ Մորոյի, թարգմանութիւն Ա. Թարխանեանի։

Թատրոնը լիքն էր։ Հասարակութիւնը ծափահարութիւններով եւ գունաւոր թերթերի անձրեւով ողջունեց տիկին Սիրանոյշին, որի նպատին էր յատկացրված այդ օրվայ ներկայացումը։ Դերակատարների թիւը պիէսի մէջ շատ էր եւ դերասանները այդ օրը համեմատաբար լաւ գիտէին իրանց դերերը։

Ներկայացման սկզբում բեմի վրա տիրում էր աշխոյժ եւ կենդանութիւն, գործողները գոհացուցիչ տպաւորութիւն էին թողնում։ Այդ տպաւորութիւնը միւս գործողութիւնների մէջ սակայն ատիճանաբար թուլացաւ։

Մադամ Սան-Ժէնի դերը կատարում էր տիկին Սիրանոյշ, որ գրաւել էր իր վրա կենտրոնական ուշադրութիւնը։ Նա գեղեցիկ էր լուսացարարուհու դերում։ Այդտեղ նա ներկայանում էր իբրեւ ժողովրդի զաւակ, որ ապրում է իր սեփական աշխատանքով, վարում է տողջ եւ զուարթ կեանք, սիրել է իր դասակարգի քաջ երիտասարդներից մէկին եւ պատրաստ է օգնել իր մերձաւորներին, եթէ կարող է։ Գեղեցիկ էր նա, երբ դքսուհի դարձած չէր հաշտվում սալօնական պահանջների հետ եւ ձանձրանում էր ամբողջ պալատական էտիկէտից. նա այդպէս էլ պէտք է մնար իր ընդհանուր ոգով։ Սակայն նա բեմի վրա սկսեց ներկայանալ արդէն չափազանց բարեկիրթ եւ նուրբ ճաշակով մի կին։ Այն տեսարանում, ուր նա խօսում է կայսրի քոյրերի հետ, նա պէտք է ներկայանար մեր առաջ իբրեւ աւելի հասարակ եւ նոյն իսկ կոպիտ մի կին, սակայն նա աւելի ազնուատոհմ էր երեւում, քան արքայազուները, նա խօսում էր աւելի բարձր ոճով եւ արիստոկրատական ելեւէջներով, քան իշխանուհիները։ Նապոլէօնի հետ խօսակցութեան ժամանակ նա հրաշալի էր, երբ հանդէս էր բերում իր շիտակ, ազնիւ հայրենասիրութեամբ տոգորված մաքուր անձնաւորութիւնը, բայց նա սխալվում էր գործածելով կոկետի չափազանց-պարիզական ձեւեր, որոնցով կարծես ցանկանում էր գրաւել Նապոլէօնին։ Նա սիրելի է ոչ իր կոկետութեամբ, այլ իր շիտակ անձնաւորութեամբ։

Պետրոսեան՝ Նապոլէօնի դերում՝ ունէր համապատասխան գրիմ, ընորոշ քայլուածք, բայց խօսակցութեան եւ շարժումների մէջ չէր գործում Նապոլէօնի տպաւորութիւնը։ Նրա բոլոր ձեւերի եւ խօսքերի մէջ պէտք է երեւար արագութիւն, կտրականութիւն, արագ ըմբռնողութիւն, թափանցիկ տեսողութիւն եւ բարոյական մեծ ոյժ։ Որքան էլ նա խօսէ [illegible]դարտ, նա պէտք է միշտ անպայման հեղինակաւոր, անդրդուելի, հրամայողական մի բնաւորութիւն մնայ։ Պետրոսեան մոռացաւ Նապոլէօնի տիպին, երբ խօսում էր իշխանուհիների հետ Մադամ Սան-Ժէնի մասին եւ երբ նա հանդիպեց Նէյպերին. միւս տեղերում նա յիշեցնում էր մի նահանգապետի, որը կարող է հրամայել, սակայն իր բարեսրտութեան շնորհիւ ներողամիտ է։

Տ. Մելիքեան, օր. Ցակոբեան, ա. Զաբէլ բաւարար կատարեցին իրանց փոքր դերերը։

Լը Ֆէվրի դերում Արաքսեան աջող էր. նրա թէ շարժումները, թէ խօսակցութիւնները համապատասխան էին դերին։ Արտասանում էր պարզ։ Վրոյը կարող էր Ֆուշէի փոքր դերից ստեղծել մի շատ ընորոշ եւ ուժեղ տիպ. նա չը տուեց ցանկալի տիպը։ Ցարութիւնեանի դերը արդարեւ աննշան էր, բայց այնտեղ եւս կային ընորոշ գծեր, որոնք մնացին չարտայայտված։ Միւս փոքր դերեր կատարողները մեծ մասամբ զուրկ էին բեմական շարժումներից։

Անհրաժեշտ ենք համարում դերասանների ուշադրութիւնը դարձնել մի խոշոր զանցառութեան վրա։ Նրանց մեծ մասը խօսում է չափազանց ցածր ձայնով։ Նոյն իսկ առաջին կարգերում յաճախ չէ լսվում, թէ ինչ են ասում դերասանները։ Այդ պակասութիւնից ազատ չէ եւ տիկին Սիրանոյշ, որի խօսակցութիւնը Ֆուշէի հետ այն բանի մասին, թէ ինչպէս պէտք է ազատել Նէյպերին, ոչ ոք չը լսեց։ Մանաւանդ ցածրաձայն են խօսում այն դէպքերում, ուր պէտք է իբր թէ գաղտնիքներ յայտնեն եւ խորհրդաւոր գործեր կատարեն։ Խօսեցէք համեմատաբար ցածր, բայց ոչ այնքան ցածր, որ միայն ինքներդ լսէք ձեզ։ Կրկնութիւնների ժամանակ պէտք է թատրոնում մի քանիսը նստեն հեռաւոր աթոռների վրա եւ ստուգեն, թէ արդեօք լսվում է դերասանների ասածը։ Եթէ օպերայում կարելի է դեռ չիմանալ, թէ ինչ են ասում գործողները, այդ ներելի է եւ հասկանալի, այնտեղ երգ կայ, որ գրաւում է մարդկանց, իսկ եթէ դրամայում, կոմէդիայում չը լսենք թէ ինչ էք ասում, էլ ինչու ենք թատրոն գալիս, կամ պէտք է հետներս լիբրետտօ վերցնենք եւ այնպէս գանք թատրոն։

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Մարտի 20-ին

Այստեղ, մեզանում, հանդամանքները այնպէս են դասաւորված, մարդիկ այնքան են զբաղված, այնքան ծանրաբեռնված անձնական հոգսերով, այն ատիճան խճճված զանազան պաշտօնավարութիւններով, որ երբ մէկն ու մէկը հնարաւորութիւն է ստեղծում ժամանակը կանոնաւորելու, քիչ ու շատ սթափվելու առօրեայ հոգսերից եւ հասարակական խնդիրներով զբաղվելու, մարդկային բարոյական պարտականութիւնների մասին խորհելու, նա ակամայ աչքի է ընկնում...

Աչքի է ընկնում, ուշադրութիւն է գրաւում ոչ թէ իր արտաքոյ կարգի տաղանդի կամ բարոյական ոյժի շնորհիւ, այլ նրանով, որ ում է դնում «թափուր» մնացած ասպարէզում, այս կամ այն կերպով աշխատանք է գործ դնում առանց որ եւ է նիւթական շահի ակնկալութեան, իր ժամանակից մաս է հանում իր բարոյական պարտականութիւնը կատարելու համար։

Այս տեսակ «ակամայ ուշադրութիւն գրաւելուց» առիթ է հանդիսանում նաեւ տեղիս հայ բժիշկների խորհրդակցական նիստը, որ տեղի ունեցաւ մի քանի օր առաջ։

Մարդասիրական ընկերութեան վարչութիւնը, ցանկանալով կանոնաւոր կերպով կազմակերպել իր գործունէութեան շրջանում ձրիաբար տրվող բժշկական օգնութեան գործը, կազմում է բժշկական խորհուրդ։ Խորհուրդը կայանում է ժամանակցութեամբ 14 բժիշկների, մէկ բժշկուհու եւ երկու մանկաբարձուհու։

Խորհրդին հրաւիրված բժիշկներից նրանք, որոնք իրանց ձրի ծառայութիւնը չեն խնայել, միշտ բժշկել են թէ աղքատանոցում պատերազմի դաշտերում եւ թէ այն չքաւորներին, որոնց ուղղել է վարչութիւնը, ցանկութիւն են յայտնում, որ բժշկական օգնութեան հետ զուգընթաց նաեւ նրանց կեցութեան բարւոքումը, հնարաւորութիւն տրվի, որ բժշկութեան կարօտ չքաւորը յարմարութիւն ունենայ նշանակված դեղերը ձեռք բերել, գործադրել, ունենայ պատկելու համապատասխան մի անկիւն եւ անհրաժեշտ սնունդ, այլապէս ապարդիւն պիտի անցնեն, ինչպէս յաճախ եւ անցնում են, բժշկի այցելութիւնները, նրա հրահանգներն ու խորհուրդները։

Արդեօք ծիծաղ յարուցանելու չափ հեգնութիւն չի՞ լինի, երբ բժիշկը պատուիրէ կաթ խմել, ձու ուտել, հաւի միս, հին դինի գործածել այն հիւանդին, որ ցամաք հաց ձեռք բերելու համար անդամ նեղութիւն է կրում. մի՞թէ կարող է մաքրութեան մասին խօսք լինել, երբ կեղտն ու ապականութիւնը նրա բաժինն են կազմում, երբ հիւանդութիւնը թշուառութեան է պատուաստվում։

Արտայայտված նպատակայարմար դիտողութիւնները, անկասկած, ընդդիմախօսութեան տեղիք չը պիտի տային, եթէ միջոց լինէր իրագործելու, եթէ Մարդասիրական ընկերութիւնը հնարաւորութիւն ունենար իրան դիմող բոլոր չքաւորների, հիւանդների դրութիւնը հիմնովին բարելաւել, բարւոքել. սակայն, տարաբաղդաբար, չը կայ այդ հնարաւորութիւնը. ընկերութիւնը չունի այդ միջոցը։ Ուրեմն ինչպէս վարվել, եթէ միջոց չը կայ հիմնովին բարեկեցութիւն ստեղծելու. մի՞թէ պիտի դադարեցնել ոչ հիմնական միջոցների գործադրութիւնը։ Ահա հէնց այս կէտն էր, որ երկար խորհրդածութեան նիւթ դարձաւ։

Մինչեւ այժմ ոտի վրա հիւանդները՝ համաձայն իրանց հիւանդութեան—ուղարկվել են այս կամ այն մասնագէտ բժշկի մօտ եւ օգնութիւն են ստացել, իսկ պառկած հիւանդներին այցելել են բժիշկները՝ ստանալով Մարդասիրական ընկերութիւնից միմիայն կառքի փող։ Կարեւորագոյն դէպքերում աջողվել է հիւանդներ զետեղել նաեւ քաղաքային հիւանդանոցում, երբ ազատ տեղ է եղել, երբ ընդունելու հնարաւորութիւն է հանդիսացել։ Բայց այդ հնարաւորութիւնը շատ սակաւ է պատահում, յաճախ, նոյն իսկ վարակիչ հիւանդութիւնների ժամանակ, անկարելի է դառնում հիւանդանոցում տեղ գտնել, իսկ պահել այդպիսիներին իրանց ողորմելի վայրերում, հակառողջապահական սոսկալի պայմանների մէջ բժշկական լոկ միջոցներ գործ դնել—այդ կը նշանակէ ապարդիւն կռիւ մղել, անմիտ գործ ձեռնարկել։

Նոյնանման դէպքերի սովորական լինելը անհրաժեշտ է դարձնում յատուկ հիւանդանոց ունենալը. եւ ընկերութեան նոր կանոնադրութիւնը այդ թոյլատրում է։ Բայց ի՞նչ միջոցներով. հարիւր հազարների կարիք է նախատեսնվում։ Խնդրի նպաստաւոր լուծման օգնութեան է հասնում բժշկուհի Մէլիք-Բեգլարեան-Օհանեան։ Ցարգելի բժշկուհին իզուր է համարում նախօրէն միջոցների պակասութեան տակ ընկճվելը. նա խորհուրդ է տալիս ձեռնարկել գործը թէկուզ շատ սահմանափակ դիրքով, ապա ատիճանաբար ընդարձակել։ Նա հաւատացած է, որ գործը անկասկած աջողութիւն կը գտնէ, եթէ ձեռնարկվի եւ տանվի ցանկալի կերպով։ Ասածներին ապացոյց բերում է մի շարք փաստեր, վիճակագրական տեղեկութիւններ արտասահմանեան հիւանդանոցների սկզբնաւորութեան վերաբերեալ, թէ ինչպէս այժմեան յայտնի հիւանդանոցներից շատերը սկիզբ են առել խրճիթանման մի սենեակից միայն, թէ ինչպէս մի պատօր գաւառական քաղաքներից մէկում, հիմք դնելով հիւանդանոցի մի անշուք խրճիթում—հասնում է փառաւոր մի այնպիսի հիւանդանոցի, որ այսօր վաթսուն հազար հիւանդ է պարունակում իր մէջ...

Փաստերի, պատմութեան առաջ խոնարհվում են վիճաբանութիւնը եւ ենթադրութիւնը... Որոշվում է գաղտնի քուէարկութեամբ ընտրել մասնաժողով՝ խնդիրը մշակելու եւ զեկուցանելու համար։ Ընտրվում են մասնաժողովի անդամներ՝ բժշկուհի Մէլիք-Բեգլարեան-Օհանեան, բժիշկներ—Դր. Օհանեան, Միք. Զալեան, Շ. Աղամիրզեան, Գար. Սարգսեան եւ Գր. Տէր-Գրիգորեան։

Իսկ բժշկական ընթացիկ օգնութեան վերաբերեալ ամենքը ամենայն պատրաստականութեամբ խոստանում են իրանց աջակցութիւնը Մարդասիրական ընկերութեան վարչութեան։

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

—

Մարտի 10-ին

Ընթերցողներին յայտնի կը լինի, որ արդէն կէս տարուց աւելի է, ինչ Խաչիկ վարդապետ Դատեանը Էջմիածնից մօտ 4 վերստ հեռաւորութեան վրա գտնված Զուարթնոց կամ Առապարի ս. Գրիգոր կոչված հին եկեղեցու աւերակների պեղումներով է զբաղված։ Նոյնպէս յայտնի են, եթէ ոչ մանրամասնօրէն, գոնէ մասամբ այն հետեւանքները, որ ունեցաւ այդ ձեռնարկութիւնը։ Աւերակների տակից բացվեցին մեր ամենահին եկեղեցիներից մէկի մնացորդները։ Ամեն մի այցելու հիացմամբ է դիտում այս հին արուեստի մնացորդը, որը իր ճարտարապետական կազմով եւ ոճով բոլորովին տարբերվում է մեր հին վանքերից եւ եկեղեցիներից։

Ցիշենք այդ աւերակների միջից հանած հնութիւններից ամենից աչքի ընկնողը, մեծ բեւեռագիր արձանագրութիւնը, որով այժմ հետաքրքրվում է գիտնական աշխարհը։

Այստեղ տեղը չէ մէկ մէկ թելու այդ պեղումների արդիւնքները։ Արդէն ամեն մի քիչ թէ շատ կրթված մարդ կը հասկանայ, թէ ինչքան մեծ նշանակութիւն ունեն այդ պեղումները մեր անցեալը պարզելու համար։ Այսպիսի հանգամանքներում ինքն ըստ ինքեան գովելի եւ օգտակար է Դատեան վարդապետի ձեռնարկութիւնը։ Նա, չը նայած իր անձնական սուղ միջոցներին, արիութեամբ շարունակում է գործը, ոչ մի տեղից օգնութիւն չը ստանալով, շատ ու շատ ֆիզիկական նեղութիւններ տանելով։ Կարծում ենք, որ մեր հայը սուրբերի մէջ դժուար գտնվեն մարդիկ, որոնք ամբողջ դաժան ձմեռը յանձն առնեն մի խորանարդ սաժէն մեծութեամբ խոնաւ ու մութ նկուղի մէջ անցկացնել, հեռու մարդկանցից եւ ընակութիւնից, ձիւնի եւ բուքի տակ աշխատանք շարունակել, ամբողջ օրերով ցամաք հաց ու պանրով գոհանալով։ Եւ եթէ կայ մէկը, որ այդ նեղութիւնները կամովին յանձն է առել եւ ոգեւորված աշխատել, ոչ մի խոչնդոտի առաջ չընկճվելով, կարծում եմ, բոլորս էլ պիտի գովենք այդպիսի մարդու եռանդը եւ ըստ կարելոյն աջակցենք։ Բայց եկէք տեսէք, թէ ինչպէս են նայում այդ բանին էջմիածնական շրջանում։

Շատ ու շատ անգամ է գրված մեր կրօնաւորների մասին. բոլորին յայտնի են, թէ որքան կոյր, եսական, շահամոլ ու նախանձոտ մարդիկ են (խօսքս բացառութիւնների մասին չէ) դրանք. այդ բոլորի վրա աւելացրէք եւ մշտական քնէածութիւնը եւ դուք կը ստանաք հայ կրօնաւորի ճիշդ պատկերը։ Այս ամենը, կըրկնում եմ, շատ անգամ է կրկնված, բայց—«սեւին սապօնը, խեւին խրատը ինչ կանէ»։

Մասնաւորելով մեր խօսքը Դատեան վարդապետի գործի վերաբերմամբ (գործի եւ ոչ անձնաւորութեան—նկատի ունեցէք), պիտի ասենք, որ սա մի բացառիկ յատկութիւն ունի իր մէջ, որը չէ մտնում վանական առաքինութիւնների շարքը եւ հետեւաբար դուր չէր գալու մեր կրօնաւորներին։ Գործը դեռ կէսին չը հասած, սկսվում է հալածանքը։ Սկսում են խօսել, բամբասել. գտնվում են մարդիկ, որոնք իրանց անձնական հաշիւները մաքրելու աջող առիթ գտնելով, մանաւանդ իրանց ձեռքում իշխանութիւն ունենալով, աշխատում են խոչընդոտ լինել, շատերն էլ ուղղակի նախանձից։ Ինչու՞ նա պիտի անէ, մտածում են, նա անում է իր համար, նա յատին մտքեր ունի։ Բայց կուրութիւնը արգելք է լինում նրանց մտածելու, որ այդ վարդապետը անձնական շահ ունենալ չէ կարող, որովհետեւ նա մի անդամ է ամբողջական մարմնի եւ որ օգուտն էլ իրանցն է, պատիւն էլ։ Պատճառաբանութիւններից մէկն էլ այն է, որ Դատեան վարդապետը գործը անում է փառասիրական դիտումներով։ Բայց երանի՞ էր, որ մի տասը գործունեայ, բան չինող փառասէր մարդիկ ունենայինք։ Զարմանալին եւ ուշադրաւն այն է, որ այդ ենթադրութիւնը անելիս մեր վանականները իրանց վրա անմեղ գառան մորթի են առնում, իբրեւ թէ իրանք այդ փառասիրութիւն ասած բանից տեղեկութիւն չունեն։

Մ.

ՆԱՄԱԿ ՇՈՒԼԱՎԷՐԻՑ

—

Մարտի 20-ին

Կատարեալ գարուն է մեզ մօտ։ Մեզ չը ջարդող անտառներն ու այգիները իրանց ծառաստանով կանաչ հագուստ են հագել, դրանց հետ նաեւ թթենիները—չերամի անյագ որդնի միակ կերակուրը։

Ամեն գարնան կամ ամառվայ սկիզբը, եթէ որ եւ է մէկը առաջին անգամ անցնելու լինի Շուլավէրով, նրա ուշադրութիւնը անտարակոյս կը գրաւէ շերամապահական գործը։ Գիւղիս բնակիչների մեծ մասը պարապում է շերամապահութեամբ եւ այս գործը տանողները բացառապէս կանայք են։ Ուրախալի է չէ։

Այո, մանաւանդ որ այդ նոյն կանայք գիւղական տնտեսութեան մէջ կժով ջուր կրելուց, գուլպայ գործելուց եւ կամ ցորենը կալսելուց, վերջը խախալներով ու չտարներով (զտարար—զտել) մաքրելուց դէնը ուրիշ շատ քիչ գործով են, իբրեւ օգնականներ, ներկայանում մի լծի տակ միմեանց հետ լծված իրանց ամոլ-ամուսիններին։ Անցէք ամառ ժամանակ մեր, կամ որ մի եւ նոյն է, ուրիշ գաւառներում ցրված ռուս կամ գերմանացի կոլոնիաներով. այդտեղ կանայք տղամարդկանցից շատ գործ ունեն։ Դաշտը հերկել, ցանել, ցորեն ու խոտ հնձել, հաւաքել կալսել—սրանք գործեր են, ուր կինը անմասն չէ մընում։ Դրանց վրա եթէ աւելացնենք ընտանեկան կեանքը եւ այդտեղ պահանջվող պարտականութիւնները (խոհանոցը եւ երեխաներին պահպանելը) եւ յետոյ մի փոքրիկ համեմատութիւն անենք մեր հայ գեղջկուհիների հետ, կը տեսնենք, որ վերջինները գիւղատնտեսութեան մէջ ուղղակի ձեռնպահ են մնում։ Այս ասելով, ցանկութիւն չենք ուզում յայտնել, որ մեր գեղջկուհիներն էլ նոյնպէս ժամանակից լինեն վերը յիշած ամառնային ծանր աշխատանքներին, աշխատանք, որ տաք կլիմայի պատճառով, դժուար տանելի է գիւղացու համար, ուր մնաց դեռ կանանց, եւ մանաւանդ որ մեր գիւղացին, հող քիչ ունենալու պատճառով, իր դաշտային տնտեսութիւնը կարողանում է տանել առանց կանանց օգնութեան։ Այդ չանելով հանդերձ, մեր գեղջկուհիների համար ուղղակի ամօթ պիտի լինէր շերամի որդը պահելու հեշտ գործի մէջ անժամանակից լինելը, քանի որ այդ գործը կարծես չափած ու ձեւած է կանանց համար։

Բայց արի ու տես, որ գիւղատնտեսութեան այս սիրուն ճիւղը դեռ որպիսի նահապետական դրութեան մէջ է մեզ մօտ։ Մեր վերը յիշած գեղեցիկ հեռանկարը տեսէք որքան նսեմանում է, եթէ ի նկատի ենք առնում, որ մեր յարգելի «աղիզներն ու հօրաքիր—մօրաքիրները» դեռ եւս իրանց ծոցում տաքցնելով են որդան սերմը կենդանացնում, որ շերամը պահում են դեռ եւս գոմերում կամ լոյսից զուրկ մարդների մէջ եւ որդերի մեծ մասը մկների ու ցեցի կերակուր դարձնում։

Այս բոլորին եթէ աւելացնենք եւ այն, որ մեր եւ շրջակայ գիւղերի մէջ որդան սերմավաճառների դերը միայն չարչի հրէաներն են կատարում եւ ի նկատի առնենք վաճառվող սերմի կասկածելի յատկութիւնը, որին ապացոյց կարող է լինել այն հանգամանքը, որ խեղճ գեղջկուհին երկու երեք ամիս անդադար աշխատանքից վերջը ստանում է վտիտ, ոձեւ եւ ամեն գոյնի բժժներ, բացի մաքուր, սպիտակ կամ դեղին գոյն ունեցողներից—մթէ պիտի զարմանանք, որ շերամապահութիւնը սեղ մօտ կը ստանայ աւելորդ ժամանակ կորցնելու մի զուր աշխատանքի ձեւ եւ ստացված ինչին արդիւնքի չնորհիւ այդ սիրուն գործը մնանկութեան կը դատապարտվի։

Նամակիս վերջում ուրախութեամբ յիշեմ, որ գիւղիս երիտասարդների մի փոքրիկ խումբ մտադիր է շերամապահութեամբ պարապել։ Ո՞րպիսի մեծ ծառայութիւն կը մատուցանէ ամբողջ գիւղին այդ խումբը—կասկածելու առիթ չունենք։ Թող միայն նա դուրս վռնդէ գիւղից չարչի սերմավաճառներին եւ դրանց գիւղերը մուծած պերբինով հիւանդոտ շերամի սերմը ու գիւղացիների մէջ տարածէ քննված ցեղուլեար սերմը։

Այդ արդէն ինքն ըստ ինքեան ահագին ծառայութիւն է։ Գոնէ գիւղը առնուազը կազատվի պերբինով եւ այլ վարակիչ ժառանգական հիւանդ շերամի որդերից։

Ա. Ի.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, մարտի 23-ին

Թոյլ տուէք երկտողով պատասխանել «Մշակ» լրագրի № 64-ում տպված Յով. Աբրահամեանի Ղարասուբազարից գրած նամակին։ Ես միանգամայն աւելորդ եմ համարում երկարօրէն խօսելու պ. Աբրահամեանի հետ, որը չորս տարվայ քնի մէջ՝ տեսնում է երազ, իբրեւ ես Համլէտ եմ խաղացել։ Այն ինչ կեանքումս «Համլէտ» ներկայացնելու համար չեմ էլ մտածել։ Ահա այս է իմ պատասխանը. մնացածը թողնում եմ հասարակութեան վճռին։ Բայց եւ այնպէս չը կամենալով ենթարկվել համանման բէցէնզէնտների քննադատութիւններին, վաղուց թողել եմ հայ բեմը։

Դերասան՝ Խարազեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Զինուորական-բժշկական ակադեմիան 15,000 բուբլի նուէր է ստացել մի առանձին լաբորատորիա շինելու համար, ուր մշտապէս տեղի ունենալու փորձեր կենդանիների վրա։ Այդ նոյն լաբորատորիայում մատդրութիւն կայ պատրաստել հակադիֆտերիտային շիճուկ, որ մինչեւ այժմ ստացվում է միայն փորձնական բժշկութեան ինստիտուտից։

—

Երէկ, մարտի 22-ին, ստացանք Ախալցխայից հետեւեալ հեռագիրը. «Բեմական արուեստի սիրողները, այսօր ներկայացնելով «Պէպօ» յօգուտ Ախալցխայի բանտի բանտարկեալների, շնորհաւորում են նրա երեսնամեակը եւ ցանկանում են նրա հեղինակին աւելի երջանիկ օրեր»։

—

Մենք արդէն հաղորդել էինք, որ Պետերբուրգում կազմվել է մի համակրելի ընկերութիւն հոգեկան հիւանդների մասին հոգալու նպատակով։ Այժմ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, ընկերութեան հիմնադիրներից մէկի, պրոֆէսոր Նիժեգորոդցեվի միջոցով, 25,000 բուբլի նուէր է ստացված յօգուտ նորակազմ ընկերութեան մի անձից, որ ցանկացել է իր անունը անյայտ պահել։

—

«Варшавскій Дневникъ» լրագիրը հաղորդում է, թէ Հենրիկ Սենկեվիչ սկսել է նիւթեր հաւաքել մի նոր պատմական վէպի համար, որի բովանդակութիւնը վերցրած կը լինի XVII դարի կեանքից, իսկ գլխաւոր հերոսը կը լինի Եան Սոբեսկի թագաւորը։ Այդ բոմանը սկզբում լոյս կը տեսնի անգլիերէն լեզուով անգլիական պարբերական հրատարակութիւններից մէկում, որի խմբագրութիւնը իբր թէ առաջարկել է Սենկեվիչին ամեն մի բառի համար մի շիլլինգ (մօտ 47 կոպէկ)։

—

Կարճ ժամանակից յետոյ Ռուսաստանի երկու մայրաքաղաքները միմեանց հետ միացնող Նիկոլայեվսկի երկաթուղու վրա մատդրութիւն կայ փորձի ենթարկել այնպիսի ապրագրնթաց շոգեկառքեր, որոնք կարող են մի ժամում անցնել 125 վերստ։ Շնորհիւ այդ շոգեկառքերի Պետերբուրգից կարելի կը լինի Մոսկվա հասնել $5^1/_2$ ժամում։

—

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը մշակել է արդէն եւ շուտով կը ներկայացնէ պետական խորհրդի քննութեան մի օրինագիծ, որով մատդրութիւն ունի հիմնել այնպիսի ուսումնարաններ, ուր պատրաստվէին գետերի վրա շրջող շոգենաւերի համար նաւապետներ եւ գետերի ուսումնասիրութեան վերաբերեալ մասնագէտներ։ Մինիստրութեան վերջին ժամանակ ձեռնարկած հետազօտութիւնից երեւում է, որ այդպիսի մասնագէտների մեծ կարիք է զգացվում այժմ։

—

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Շաբաթ, մարտի 18-ին, երեկոյեան, Գէորգեան ճեմարանում տեղի ունեցաւ երաժշտական երեկոյթ։ Երգում էր Կոմիտաս վարդապետի կազմած քառաձայն խումբը, Կոմիտասի ղեկավարութեամբ։ Երեկոյթի ծրագիրը բաղկացած էր երկու մասից, հարուստ եւ հետաքրքրական բովանդակութեամբ։ Երգվեցին մօտ 26 երգեր։ Մէջ ընդ մէջ տեղի ունեցան բանախօսութիւններ։ Աշակերտ Բաղդասարեանը խօսեց եւրոպական երաժշտութեան մասին եւ պատմեց գերմանացի յայտնի Վագնէր երաժշտագէտի կենսագրութիւնը։ Ց. Խաչատրեանը խօսեց երաժշտութեան զարգացման մասին ընդհանուր գծերով։ Իսկ ինքը՝ հ. Կոմիտասը խօսեց հայոց եկեղեցական եղանակների մասին եւ շատ հաւոզիչ փաստերով ցոյց տուեց, որ դրանք մեր ժողովրդական եղանակներն են։ հ. Կոմիտասը իր ամեն մի ասածի համար բերում էր օրինակներ—երգելով այնպէս, որ ունկնդրի համար նմանութիւնը ակներեւ էր։ Հանդիսականները մէջ ընդ մէջ ծափահարում էին հ. ճառախօսին։ Երգերն իրարից աջող, իրարից ներդաշնակ, իրարից քաղցրալուր էին։ Լաւ էր Վագնէրի Լօենգրինից կարապի երգը, որ սոլօ երգեց այակերտ Սիմէօնեան, Կոմիտաս վարդապետի դաշնակցութեամբ։ Ախորժելի էր լսել քրդական հովերգը դաշնակով եւ ջութակով, իսկ քրդական պատերազմական նուագը դաշնակով եւ սրինգով. դաշնակով նուագում էր Կոմիտաս վարդապետը, իսկ ջութակով եւ սրինգով աշակերտները»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Բգացաւ հիւանդութիւնը դեռ շարունակվում է այստեղ։»

—

ՍԱՄԱՐԿԱՆԴԻՑ մեզ գրում են. «Սաստիկ շոք է անում այստեղ. շերամի սերմերը սկսել են դուրս գալ, մի բան, որ Կոկանդում, Անդիժանում եւ Մարգելանում չը տեսնված բան էր։ Շուկայում կայ մինչեւ 60—70,000 պուդ շերամի սերմ 20—30 գրանանոց, որ առաջարկվում է 5—20 կոպէկ, այն էլ գնողներ չը կան, այն ինչ առաջ այդ տուփերը ծախվում էին 1 ր. 50 կոպ. հատը։ Պահանջը քիչ է, սերմը շատ, ահա ինչ է պատճառը։ Այս տարի չը տեսնված քանակութեամբ սերմ է բերված, ինչից դրդված, չը գիտենք։ Շրջակայ գիւղերում մեծ ֆիրմաները՝ Ալոյիզի, Բերտէ եւ այլն, տարածում են սերմերը, գնողներին թողնելով՝ ինչքան ուզում են վճարեն, այն էլ յետոյ՝ բերքի ժամանակ։ Երբեմն էլ տեսնում էք մի մարդ ձի նստած կանչում է.—«սերմ, սերմ, էժան, նոյն իսկ ձրի» եւ այս ձեւով պատեցնում են գիւղերը, որ սպառվի, որովհետեւ գիտեն, որ մի շաբաթից յետոյ մշակին պէտք է փող տան, որ սերմերը դէն ածէ։ Վնասը մեծ է. մի քանի փոքր ֆիրմաներ գուցէ դադարեցնեն այդ առեւտուրով պարապելը։ Վնասվողների մէջ կան շատ յոյներ։ Թթենիները եւ այլ պտղատու ծառեր տերեւակալել են, ծաղկել են եւ ծաղիկներն էլ սկսել են բացվել»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Մօտ ժամանակներս դէպի Ախալցխա տանող խճուղու վրա կռիւ է պատահել այդ խճուղու վրա աշխատող խանդօցիների եւ մի քանի «փուրգօնչիկների» մէջ. երկու կողմից էլ ծանր ու թեթեւ վիրաւորվածներ են լինում։ Այս օրերս ծանր վիրաւորված մի խանդօցի երիտասարդ վախճանվեց։ Շատ ցաւալի է. ցաւալի է մանաւանդ այն պատճառով, որ կռիւ պատճառը այն է եղել, որ փուրգօնչիկները դիմել են բանւորներին, թէ ճանապարհի վրա թափած գործիքները վերցրէք, իսկ գիւղացիները պատասխանել են, թէ փուրգօնները ուրիշ տեղով քշեցէք, որի հետեւանքը եղել է կռիւ, արիւնհեղութիւն եւ ահ... Գործը քննվում է»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Ղուբա քաղաքի ազգաբնակութեան կողմից, նաեւ վաճառականների անունից մի բազմատորագիր խնդիրք է ուղարկվում Բագուի նահանգապետին՝ խնդրելով նրա միջամտութիւնը՝ Խաչմազից դէպի Ղուբա խճուղի շինելու համար։ Այդ խնդիրքի մէջ խնդրատուները բացատրում են, որ տարվայ մեծ մասը, յաճախ տեղացող անձրեւների պատճառով, ճանապարհները անանցանելի են դառնում, որ քաղաքի համար անհրաժեշտ, առաջին հարկաւորութեան մթերքները, ինչպէս, օրինակ, թէյը, շաքարը, նաւթը թանգանում են, որովհետեւ այդ մթերքները չարունակ չեն ստացվում Բագուից, ճանապարհ չը լինելու պատճառով։ Պատահել է մինչեւ անգամ այնպիսի դէպք, որ նաւթի գունտը այստեղ ծախվել է 20 կ., իսկ Բագուից այստեղ մինչեւ հիմա էլ բանում են փուրգօններ, սայլեր, որոնք պուդից 30—40 կոպէկ են վերցնում. իսկ Խաչմազից այստեղ, որն ընդամենը $28^1/_2$ վերստ տարածութիւն է, վերցնում են պուդից 25 կոպէկ։ Ցուսով ենք, որ Բագուի պ. նահանգապետը կը յարգէ Ղուբայի հասարակութեան խնդիրքը, քանի որ խճուղին հարկաւոր է եւ Բագուի այն մասի հասարակութեան եւ վարչութիւնների համար, որոնք ամառը տեղափոխվում են այստեղ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ունդարական պարլամէնտում առեւտրի մինիստրը արաւ հետեւեալ անսովոր յայտարարութիւնը, որ մեծ տպաւորութիւն գործեց ամենքի վրա։ «Պատգամաւոր Բակօվսկին,—ասաց մինիստրը,—հաղորդեց ինձ, որ նա լսել է կառավարչական կուսակցութեան պատկանող մի անդամից, թէ իբր ես աշխատում եմ արտիստիքական ընկերութեան պայմանագրութիւնն ընդունել տալու մասին նրա համար, որ այդ ընկերութեան բաժնեթղթերի մի երրորդական մասը ինձ է պատկանում։ Ես ազնիւ խօսք տուի Բակօվսկուն, որ չունեմ եւ չեմ էլ ունեցել ոչ մի բաժնեթուղթ»։ Պատգամաւորների ժողովը, լսելով մինիստրի յայտարարութիւնը, որոշեց պահանջել ազատամիտ կուսակցութեան այն անդամներից, որոնք տարածել են այդ լուրը, երեք օրվայ ընթացքում յայտնեն իրանց անունները, հակառակ դէպքում պատգամաւոր Բակօվսկին պարտաւորվում է ինքը տալ նրանց անունները։

—Միացեալ-Նահանգների կառավարութիւնը որոշեց իր դիրքը դէպի ռուս-չինական համաձայնութիւնը Մանջուրիայի վերաբերմամբ հեռաւեալ պաշտօնական հաղորդագրութիւնով, որ հրատարակվեց մարտի 13-ին։ «Միացեալ-Նահանգների կառավարութիւնը—ասված է հաղորդագրութեան մէջ—դեռ փետրվարի 16-ին յայտնեց մեծ պետութիւններին, որոնց թւում եւ Ռուսաստանին, որ նա անյարմար եւ մինչեւ անգամ խիստ վտանգաւոր է համարում չինական շահերի տեսակէտից այն հողային եւ ֆինանսական համաձայնութիւնները, որոնք կապվում են Չինաստանի եւ առանձին-առանձին պետութիւնների մէջ, առանց մեծ պետութիւնների գիտութեան, որոնք այժմ բանակցութիւններ են վարում Պեկինում»։ Ապա հաղորդագրութիւնը շարունակում է. «Բայց եթէ այդպիսի համաձայնութիւններ կապվէին էլ, նոյն իսկ այդ ժամանակ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը չի փոխի իր վերաբերմունքը դէպի «բաց դռների» քաղաքականութիւնը Չինաստանի որ եւ է մասում, դրա հետ միասին եւ Մանջուրիայում։ Ռուսաստանը պարտաւոր է բաց պահել Մանջուրիայի մուտքը Միացեալ-Նահանգների համար, եթէ նա մինչեւ անգամ տիրէ Մանջուրիային։ Կառավարութիւնը կարծում է, որ ռուս-չինական գաղտնի համաձայնութիւնը, եթէ ոչ տառացի կերպով, գոնէ ընդհանուր առմամբ, խախտում է այն ընդհանուր համաձայնութիւնը, որ ամառը կապեցին իրար հետ մեծ պետութիւնները Չինաստանը անձեռնմխելի պահելու համար։ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը պատրաստ է գործ դնելու իր բարոյական համոզման եւ ազդեցութեան ամբողջ ոյժը ռուս-չինական մասնաւոր պայմանագրութեան դէմ, բայց եւ այնպէս նա աւելի առաջ չի գնայ։ Նախագահը եւ մինիստրութիւնը ենթադրում են, որ Ռուսաստանը գուցէ եւ ունի իրաւունք մի քանի առանձին երաշխաւորութիւններ ստանալու՝ իր մանջուրական երկաթուղային գծերը պաշտպանելու համար, բայց ոչ այն չափով, ինչ չափով որ նա իրաւունքներ է ստանում ռուս-չինական պայմանագրով։»

—Նայելով այն տեղեկութեանը, որ «Standard» լրագիրը ստացել է Շանգհայից, Չինաստանը 50,000 զօրք է ժողովում, որպէս զի պաշտպանէ Եանցէ գետի վրա եղած բերդերը։

—Ունգարիայում, ինչպէս եւ Իտալիայում, լսվում են ձայներ երեքպետեան դաշնակցութեան վերանորոգման դէմ։ «Budapesti Hirlap» մի ընդարձակ յօդուածով ապացուցանում է, որ երեքպետեան դաշնակցութիւնը ջերմանոցի բոյս է, որ աճեցրած է արուեստական կերպով եւ որը ոչ մի օգուտ չէ տուել իրան աճեցնելու մէջ մասնակցողներին։ Շնորհիւ այդ դաշնակցութեան՝ Ունգարիան զրկվեց ֆրանսիական վաճառականոցից, ուր շատ լաւ գներով ծախվում էին ունգարական անասունները, հացը եւ փայտեղէնը, մինչդեռ իտալական գինիներին տուած արտօնութիւնը սպառում է ունգարական գինեգործութիւնը։ Այս ամենին պէտք է աւելացնել եւ այն, որ Ունգարիան ստիպված է խեղդել իր համակրութիւնը դէպի Ֆրանսիան ի սէր այն համակրութիւնների, որ փաթաթում է նրա վզին երեքպետեան դաշնակցութիւնը։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

22 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի 21-ին Ցարսկոյե-Սելօի պալատում Բարձրագոյն ներկայութեամբ տեղի ունեցաւ ճաշ ի պատիւ մեծ-բրիտանական արտակարգ դեսպանութեան։

Մարտի 22-ին Պետերբուրգի նահանգական դատարանում սկսվեց շտաբս-կապիտան Գեկէրի գործի քննութիւնը, որ մեղադրվում է Պետերբուրգի յայտնի ակնաբոյժ Դոնբէրգի սպանութեան մէջ։ Վկաները 41 են։ Մեղադրում է պրոկուրորի օգնական Նովիցկին, պաշտպանում են երդուեալ հաւատարմատարներ՝ Մարգօլին եւ Միրոնով։

ՏԻՄԷՆ։ Եղանակը տաք է։ Զուրը Տուրի մէջ աւելանում է։

ԿԱԼՈՒԴԱ։ Օկա գետը բացվեց։

ՊԱՐԻԶ։ Վալդէկ-Ռուսսոի օպէրացիան կատարվեց առաւօտեան. կէսօրին մինիստրի առողջական դրութիւնը աւելի բաւարար էր. ջերմ չը կայ։

ՇԱՆԳՀԱԻ։ Նիդերլանդական կառավարութիւնը հարիւր հազար ֆունտ ստերլինգի պահանջ յայտնեց նիդերլանդական պատերազմական նաւերը Հնդկաստանից Չինաստան ուղարկելու համար։

ՇԱՆԳՀԱԻ։ Լիւչուանլիի հրաւէրով, գեներալ Տունֆուսիան գաղտնի կերպով այցելեց

Սինանֆուին եւ կայսրուհու մօտ ընդունելութեան ժամանակ իբր թէ խորհուրդ տուեց նրան չը վերադառնալ Պէկին, մինչեւ դաշնակից զօրքերը գրաւած ունեն քաղաքը։

23 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Правительственный Вѣстникъ» լրագիրը, անցքերի պատմական ընթացքը Չինաստանում պատմելուց եւ Չինաստանի վերաբերմամբ կառավարչական յայտարարութիւնները եւ զուտ խաղաղասիրական ակտերը թեւելուց յետոյ, տպում է կառավարչական հաղորդագրութիւն, որը վերջանում է հետեւեալ յայտարարութեամբ։ «Սպասելով այն ընդհանուր հարցերի մօտալուտ լուծմանը, որոնք վերաբերում են բոլոր օտար պետութիւնների փոխադարձ յարաբերութիւններին դէպի Չինաստանը, կառավարութիւնը բարեպատեհ համարեց հոգ տանել իրերի հաստատուն կարգ ստեղծելու համար Չինաստանի՝ Ռուսաստանին հարեւան շրջաններում։ Այդ նպատակով ամենից առաջ ռուսական զինուորական իշխանութիւնների եւ մանջուրական երեք նահանգների չինական ցղիւնեաների միջեւ կապվեցին ժամանակաւոր գրաւոր պայմաններ—modus vivendi—տեղական քաղաքացիական վարչութիւն վերականգնելու վերաբերմամբ։ Դրանից յետոյ Կայսերական կառավարութիւնը մշակեց առանձին համաձայնութեան ծրագիրը Չինաստանի հետ, որը որոշում էր Մանջուրիան կամաց կամաց մաքրելու կարգը, նոյնպէս եւ ժամանակաւոր միջոցներ, որոնց նպատակն էր ապահովել հանգստութիւնը այդ շրջանում եւ առաջն առնել ապագայում այնպիսի անցքերի կրկնութեան, որպիսիք տեղի ունէին անցեալ տարի։ Դժբաղդաբար, օտար ժամուլի մէջ, հասարակական կարծիքը յարուցանելու համար Ռուսաստանի դէմ, տարածվում էին յուզիչ լուրեր Կայսերական կառավարութեան նպատակների եւ դիտաւորութիւնների մասին, բերվում էին Մանջուրիայի վրա հովանաւորութեան վերաբերեալ մի ինչ որ դաշնագրի աղաւաղված բնագիրներ եւ հաղորդվում էին դիտաւորեալ սուտ տեղեկութիւններ Ռուսաստանի եւ Չինաստանի միջեւ կայանալիք համաձայնութեան մասին։ Մինչդեռ այդ համաձայնութիւնը պէտք է սկիզբ ծառայէր իրագործելու կայսերական կառավարութեան յայտնած դիտաւորութիւնը՝ վերադարձնել Չինաստանին Մանջուրիան, որ գրաւել էին ռուսաց զօրքերը միմիայն անցեալ տարվայ յուզիչ դէպքերի պատճառով։ Պատերազմական հաւապատասխան կարգադրութիւնների համար անհրաժեշտ էր յայտնի ժամանակամիջոցում լուծել դրական կամ բացասական մտքով այն հարցը, թէ արդեօք հնարաւոր է փոխադարձ համաձայնութեամբ, եւ այժմ եւ եթ, պայմանաւորել Մանջուրիան մաքրելու գործը։ Ստացված տեղեկութիւնների համեմատ, Ռուսաստանի հետ մի այդպիսի համաձայնութիւն կապելու համար չինական կառավարութեան առաջ ստեղծվել էին լուրջ արգելքներ, որի պատճառով էլ Մանջուրիան աստիճանաբար մաքրելու համար ի նկատի ունեցած միջոցների անմիջապէս ընդունելը անկատար մնաց։ Ինչ վերաբերում է վերոյիշեալ շրջանը Չինաստանին վերջնականապէս վերադարձնելուն, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ դիտաւորութեան իրագործումը կարող է տեղի ունենալ միայն կայսրութեան մէջ իրերի կատարելապէս բնական դրութիւն վերականգնելուց եւ մայրաքաղաքում ինքնուրոյն եւ բաւական ուժեղ կենտրոնական կառավարութիւն հաստատելուց յետ, որպէս զի ապահովվի Ռուսաստանը անցեալ տարվայ անցքերի կրկնութիւնից, պահպանելով ներկայ ժամանակաւոր կազմակերպութիւնը Մանջուրիայում կարգ պահպանելու նպատակով Ռուսաստանի ընդարձակ սահմանի մօտ եւ մնալով միաժամանակ անշեղ հաւատարիմ իր սկզբնական բաղմիցս յայտարարած քաղաքական ծրագրին։ Կայսերական կառավարութիւնը հանգիստ կը սպասէ անցքերի յետագայ ընթացքին։»

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն. Մ. ԶԱՐԻՕՆՕՎ

վերադառնալով Թիֆլիս վերսկսեց աչքի հիւանդութիւն ունեցողների ընդունելութիւնը (ամեն օր, ժամի 1-ից մինչեւ 3-ը)։ Կանիեվսկայա փողոց, № 7։ 1—3

Հոյս տեսաւ
ԲԺ. Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
,,ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐԻ''
№ 1
„Մ Ի Խ Մ Ի Ր"
Գինն է 5 կոպ.
Ծախվում է Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում եւ հեղինակի մօտ։ Հեղինակի հասցէն. Тифлисъ. Доктору Ваг. Арцруни. 1—10

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
КАКАО
С.С.ІУ и К°
ФАБР.
МОСКВА.

ՄԵՂՈՒԱՊԱՀՆԵՐԻՆ

Ընդունում եմ պատուէրներ արուեստական մոմաթերթեր չինելու, ֆունտը 1 ռուբլով։ Պատուէր տուողի մոմից թերթեր պատրաստելու համար վերցնում են ֆունտին 30 կոպէկ։ Մեղուապահներից գնում եմ մոմ չուկայի գնով։ Փոխում եմ մոմաթերթերը մոմի հետ։ Պատուէր տալիս խնդրում եմ հաղորդել չրջանակի չափը։ Ընդունում եմ պրակտիկանտներ եւ սովորեցնում եմ նրանց մեղուապահութեան գործնական եղանակները։ Զքաւոր պրակտիկանտներին ընդունում եմ ձրի, իսկ միւսներից վերցնում եմ 10 ռուբլի ամբողջ սեզոնի համար։ Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում մանաւանդ այս տարին, որովհետեւ ես նոր սարքում եմ արդիւնաբեր, տեղից տեղ փոխադրելու մեղուանոց եւ մեղուապահութեամբ պարապել ցանկացողները կարող են, առաջ քան թէ փող ծախսել գիւղատնտեսութեան այդ ճիւղի վրա, գործնականապէս համոզվել մասնագէտի մօտ, թէ ինչ օգուտ կարելի է քաղել մեղուապահութիւնից եւ ինչպէս արդիւնաբեր դարձնել նրան։

Մեղուապահ Վասիլի Ալէքսանդրովիչ ՍԱԲՕ

Հասցէս՝ Кутаисская улица (Дидубэ), собств. домъ, № 17 въ Тифлисѣ. 3—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս։ Մեկնում է Բաթումից ուրբաթ, մարտի 30-ին (ապրիլի 12)—չոգենաւ՝ ՄԻՆԳՐԵԼԻ, կապիտան ՇԻԼԹ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորական գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. Խոջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒՄ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՈՍՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Խ. Հ. Ջ.) 1—20

ԲԱԳԻՈՒՄ
ՍԱՄՍՈՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ
Գրավաճառանոցում ծախվում են հետեւեալ գրքերը։

ԼԷՕ, Հայկական տպագրութիւն, ա. հատոր, Թիֆլիս, 1901 թ., գ. 1 ր. 50 կ.։
» Մէլիքի աղջիկը, Թիֆլիս, 1898 թ., գ. 1 ր. 30 կ.։
ԱՀԱՐՈՆԵԱՆ, Ա. Պատկերներ, Մոսկվա, 1900 թ., գ. 1 ր.։
ՇԱՀԱԶԻԶԵԱՆ, Ս. Յիշողութիւններ Վարդանանց տօնի առիթով, Մոսկվա 1901 թ., գ. 75 կ.։
ԴՈՒՐԵԱՆ, Պ. Բանաստեղծութիւններ., Բագու, 1900 թ., գ. 20 կ.։
ՍԱՐԳՍԵԱՆՑ, Լ. Այց թիւրքաց Հայաստանին, Թիֆլիս, 1890 թ., գ. 60 կ.։
ԿՈՒՍԻԿԵԱՆՑ, Կ. և Լ. ՍԱՐԳՍԵԱՆՑ, Մայրենի խօսք. Թիֆլիս, 1900 թ., գ. 70 կ.։
ՑԻՄԻՐԵԱԶԵՎ, Կ. Զարզզ Դարվին. Բագու, 1900 թ., գ. 25 կ.։
ԿՈՊՊԷ, Ֆ. Թագի համար. Բագու, 1899 թ., գ. 50 կ.։
ՀԱՂԱԲԵԿԵԱՆ, Յ. Հարստութեան Աւետարան. Շուշի, 1899 թ., գ. 40 կ.։
ՖԼԱՄՄԱՐԻՕՆ, Կ. Ուրանիա. Թիֆլիս, 1900 թ., գ. 1 ր.։
ԱՏՐՊԵՏ. «Շինոց» գ. 30 կ., «Սարաֆ»—30 կ., «Խև Կարապետ»—1 ր., «Քոռ Եղիկ»—30 կ., «Շուշան»—1 ր., «Ժառանգներ»—30 կ., «Բէյրայի Առաքելը»—25 կ.։
ՐԱՖՖԻ. Խաչագողի յիշատակարանը. Թիֆլիս, 1896 թ., գ. 2 ր. 50 կ.։
ԵԼԻՇԷԻ պատմութիւնը Վարդանի և հայոց պատերազմի համար—60 կ.։
ԽՈՐԵՆԱՑՈՒ Հայոց պատմութիւն բ. տիպ. գ. 1 ր. 50 կ.։
ՊԱՐՈՆԵԱՆԻ, «Ազգային Զոյներ», «Հոսհոսի ձեռատետրը», «Քաղաքավարութեան վարները»։
ԳՈՒԼԱՍԵԱՆՑ, Դ. Պանդուխտ պատանի. 1900 թ., գ. 70 կ.։
ԲԺՇ. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ, «Մեր նեարդերը», «Սիֆիլիս», «Վենեբական ախտեր»։
Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ընտիր երկասիրութիւնները. ա. և բ. հ. 4 ր.։
» » Բանաստեղծութիւնները—50 կ.։
ՍԵՓԻԱԿԵԱՆ, Ա. Եպիս. Քահանայական խնդիր. գ. 1 ր.։
ՄԱՆՈՒԷԼԵԱՆ, Լ. Բանաստեղծութիւններ—50 կ.։
» » Խորտակված կեանք—1 ր.։
ՇԻՐՎԱՆԶԱԴԷ Քառս—1 ր. 50 կ.։
ՍՏՕԿՏՕՆԻ կին թէ Վագր. Բագու, 1899—15 կ.։

ЭЗОВЪ, Г. А. Сношенія Петра Великаго съ армянскимъ народомъ. С.-Пет. 1898 г. ц. 5 р.

ПОТТО, В. Генералъ-Адъютантъ Иванъ Давыдовичъ Лазаревъ. Тифлисъ, 1900 г. ц. 2 р.

Братская помощь. I. изд. въ пер. 6 р.

ԵԵՐԵՆՑԻ, «Երկունք», «Թորոս Լեռնի», «Թէոդորոս Ռշտունի»։

Եւ այլ բազմաթիւ հայերէն և ռուսերէն գրքեր։

(2.) 1—3

Р. К. и К°
ЗАРЕГИСТРИРОВАНО КЛЕЙМО ТОРГ. МАРКА
ФАБРИЧНО-ТОРГОВОЕ ТОВАРИЩЕСТВО
Р. КЁЛЕРЪ и К°
ВЪ МОСКВѢ, ИЛЬИНКА, СРЕДНІЕ ТОРГ. РЯДЫ.
ОТДѢЛЕНІЯ: ВЪ С.ПЕТЕРБУРГѢ, САРАТОВѢ, ВЛАДИВОСТОКѢ И НИЖЕГОРОДСКОЙ ЯРМАРКѢ.
Чистый Химичъ, СѢРНОКИСЛЫЙ и СОЛЯНОКИСЛЫЙ.
Представляется полная возможность запастись этимъ необходимымъ въ каждомъ домѣ лѣчебнымъ средствомъ за самую недорогую цѣну съ вѣрнымъ ручательствомъ Т-ва Р. Кёлеръ и К° за химическую чистоту препаратовъ. Непремѣнное условіе: требовать на каждой стеклянной банкѣ, съ фирменнымъ ярлыкомъ и клеймомъ Т-ва неповрежденную проволочную сѣтку съ пломбой Товарищества: Р. К. и К°.
Цѣна 1 руб.
КЁЛЕРСКАЯ КАРМАННАЯ ДОРОЖНАЯ АПТЕЧКА
содержитъ 20 необходимѣйшихъ средствъ и предметовъ для подачи первоначальной помощи при всѣхъ наичаще встрѣчающихся заболѣваніяхъ, пораненіяхъ и проч. съ наставленіемъ.
Продажа особымъ циркуляромъ Медицинскаго Департамента отъ 24 декабря 1897 г. № 8906 разрѣшена не только въ аптекахъ, но и всюду: въ магазинахъ, на желѣзнодорожныхъ станціяхъ, пароходныхъ пристаняхъ и т. д.
КЁЛЕРСКІЕ УСОВЕРШЕНСТВОВАННЫЕ КОЛЬДЪ-КРЕМЫ И ГУБНАЯ ПОМАДА
всегда отличаются своею свѣжестью и проявляютъ свои превосходныя свойства во всѣхъ случаяхъ ихъ употребленія.
КЁЛЕРСКАЯ Душистая Вода
ЛУЧШЕ ВСЯКИХЪ ОДЕКОЛОНОВЪ.
КЁЛЕРСКІЕ ЦВѢТОЧНЫЕ ОДЕКОЛОНЫ
ВСѢХЪ ЗАПАХОВЪ
ПО НѢЖНОСТИ И СТОЙКОСТИ АРОМАТА
внѣ конкурренціи.
КЁЛЕРСКІЕ Z—ДУХИ
ФАБРИКИ Т-ВА Р. КЁЛЕРЪ и К°.
ЭТИ ДУХИ ПРЕДСТАВЛЯЮТЪ СОБОЮ ПОСЛѢДНЕЕ СЛОВО ПАРФЮМЕРНАГО ИСКУССТВА.
Кёлерскіе Z духи, не смотря на всю свою нѣжность, очень концентрированы и поэтому ихъ пріятный запахъ развивается при употребленіи только мало помалу и ЗАТѢМЪ УДЕРЖИВАЕТСЯ НѢСКОЛЬКО СУТОКЪ.
КЁЛЕРСКІЕ СГУЩЕННЫЕ Желе, Кисель, Мороженое РАЗНЫХЪ ВКУСОВЪ И КЛЮКВЕННЫЙ КВАСЪ.
Вкусно! Удобно! Дешево!
ВЫСШАЯ НАГРАДА GRAND PRIX НА ПАРИЖСКОЙ ВЫСТАВКѢ 1900 г.
ВЪ ПРОДАЖѢ ВЕЗДѢ У ВСѢХЪ БОЛѢЕ ИЗВѢСТНЫХЪ ТОРГОВЦЕВЪ.

Дозволено цензурою, Тифлисъ, 23 Марта 1901 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27